600.0031.29.12.00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2000 թվականի №31
ք. Երևան

Էլեկտրաէներգետիկայի ոլորտի սակագների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և 20-րդ հոդվածի ա) կետով, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել՝

1.1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- միադրույք սակագնային համակարգում առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 9.341 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 4.375 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը,
  - հզորության ամսական վճարը՝ 2929.44 դրամ/կՎտ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.2. «Հրազդանի ջերմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- միադրույք սակագնային համակարգում առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 17.751 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 14.515 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը,
  - հզորության ամսական վճարը՝ 656.47 դրամ/կՎտ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.3. «Երևանի ջերմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- միադրույք սակագնային համակարգում առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 18.967 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 15.604 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը,
  - հզորության ամսական վճարը՝ 1978.54 դրամ/կՎտ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.4. «Որոտանի ՀԷԿ -երի համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- միադրույք սակագնային համակարգում առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 3.004 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 1.896 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը,
  - հզորության ամսական վճարը՝ 215.13 դրամ/կՎտ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.5. «Սևան-Հրազդանյան կասկադ» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- միադրույք սակագնային համակարգում առաքվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 6.299 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- երկդրույք սակագնային համակարգում՝
  - առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 2.299 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը,
  - հզորության ամսական վճարը՝ 584.56 դրամ/կՎտ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.6. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության համար՝

- միադրույք սակագնային համակարգում ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության սակագինը՝ 1.069 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը.
- երկդրույք սակագնային համակարգում՝
  - ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության վճարը՝ 0.305 դրամ/կՎտժ, ներառյալ ավելացված արժեքի հարկը,
  - ծառայության հաստատագրված ամսական վճարը՝ 334.90 մլն դրամ, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.7. Բաշխիչ ընկերություններին «Հայէներգո» ՓԲԸ-ի կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի հետևյալ սակագները՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

«Երևանի էլեկտրացանց» ՓԲԸ-ին՝ 16.225 դրամ/կՎտժ

«Կենտրոնական էլեկտրացանց» ՓԲԸ-ին՝ 12.178 դրամ/կՎտժ

«Հյուսիսային էլեկտրացանց» ՓԲԸ-ին՝ 8.166 դրամ/կՎտժ

«Հարավային էլեկտրացանց» ՓԲԸ-ին՝ 12.635 դրամ/կՎտժ

2. Ընդունել ի գիտություն, որ բաշխիչ ընկերություններին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագներում ներառված են նաև «Հայէներգո» և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ների ծառայության դիմաց վճարները:

3. Սույն որոշման 1.1-1.6 կետերում նշված ընկերություններին՝ 2001 թվականի փետրվարի 1-ից մինչև 2001 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հաշվառումն իրականացնել և՛ միադրույք, և՛ երկդրույք սակագնային համակարգերով, իսկ 2001 թվականի ապրիլի 1-ից միայն երկդրույք սակագնային համակարգով:

4. «Հայէներգո» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 2001 թվականի փետրվարի 1-ից մինչև 2001 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում սույն որոշման 1.1-1.6 կետերում նշված ընկերությունների հետ հաշվարկների և վճարումների համար հիմք ընդունել միադրույք սակագնային համակարգով կատարված հաշվարկները, իսկ 2001 թվականի ապրիլի 1-ից՝ երկդրույք սակագնային համակարգով կատարված հաշվարկները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2001 թվականի փետրվարի 1-ից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահի տեղակալ՝ **Ն. Գրիգորյան**